

*Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի հունվար ամսվա նախադեպի ամփոփում*

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է ծավալել 2009 թվականի հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի հունվար ամսի նախադեպը:

Հաշտարարի գրասենյակը հունվար ամսին ստացել է ընդհանուր քանակությամբ յոթ բողոք, որոնցից միայն մեկը գրավոր տեսքով: Ստացված բողոքներից երեքը համաձայն օրենքի ենթակա չէին քննության Հաշտարարի կողմից, չորսի քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում էին, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չէին ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Նշված չորս բողոքներից երկուսը վերաբերում էին բանկի և վարկային կազմակերպության կողմից վարկի գումարի ամսական մարումների չափի/տոկոսագումարների սխալ հաշվարկմանը: Մեկ բողոքը վերաբերում էր հաճախորդի վարկային գծից կատարված ավել գանձումներին, և վերջին դիմորդի պահանջը ներկայացված էր ապահովագրական ընկերության դեմ, որը հրաժարվում էր փոխհատուցել վթարի հետևանքով վնասված մեքենայի ծախսը:

Այն դիմորդներին, որոնց ներկայացրած պահանջները ենթակա էին քննության Հաշտարարի կողմից, գրասենյակի աշխատակիցները տվել են պարզաբանումներ և խորհուրդ են տվել նախ դիմել այն ֆինանսական կազմակերպությանը, ում դեմ ուղղված է բողոքը: Այդ հաճախորդների ներկայացրած բողոք-պահանջների հետագա ընթացքը ներկայումս վերահսկվում է Հաշտարարի գրասենյակի կողմից:

<b>Ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը</b>	<b>7</b>
Ենթակա չեն քննության հաշտարարի կողմից	3
Ենթակա են քննության հաշտարարի կողմից	4
Կապված են բանկի և վարկային կազմակերպության կողմից վարկային տոկոսների սխալ հաշվարկման հետ	2
Կապված է բանկի կողմից հաճախորդի վարկային գծից ավել գանձումների հետ	1
Կապված է ապահովագրական ընկերության կողմից վնասի փոխհատուցումը մերժելու հետ	1

Հաշտարարին կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, “Էրեբունի Պլազա” բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ:

**Ֆինանսական համակարգի հաշտարար**